

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԳԱՅԱՆԵ ՌՈՐԵՐՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ

«Ուրարտուի (Վանի թագավորություն) կերպարվեստի պատկերագրական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունում առաջին փորձն է արվել ուսումնասիրելու Ուրարտուի (Վանի թագավորության) կերպարվեստի պատկերագրական առանձնահատկությունները: Այդ առումով, թերևս, աշխատությունը եզակի փորձ է Ուրարտական արվեստը դիտարկել պատկերագրական տեսակետից, որը սովորաբար հատուկ է միջնադարյան արվեստի ուսումնասիրություններին: Հատկանշական է, որ վերջին տարիներին հեղինակի կողմից պեղումների արդյունքների հրապարակումների հիման վրա կատարվել են հնագիտական լայնածավալ ուսումնասիրություններ ուրարտական մի շարք հնավայրերում՝ (Էրեբունի (Արին-բերդ), Թեյշեբաինի (Կարմիր-բլուր), Արգիշտիխինիլի (Արմավիր), Ալթին-թեփե (Ճմին), Սերբար-թեփե (Գիլիմլի), Թոփրակ-կալե (Ռուսախինիլի), Այանիս (Հայկաբերդ), Վերին Անձավ (ներկայիս Թուրքիա), Բաստամ (Իրան)): Բուն աշխատանքում կատարված են արժեքավոր ուսումնասիրություններ՝ որմնանկարչական, քանդակագործական, դեկորատիվ-կիրառական արվեստի պատկերագրող մի շարք նմուշների քննությամբ: Ուստի հեղինակի կողմից կատարվել է համակողմանի ուսումնասիրություն, և որքան մեզ հայտնի է, այն խորապես չէր դիտարկվել կերպարվեստի պատկերագրական առանձնահատկություններով, ինչն իր առջև խնդիր է դրել հեղինակը:

Ատենախոսությունը շարադրված է 130 համակարգչային էջի վրա, բաղկացած է ներածությունից, որտեղ հեղինակը ներկայացրել է աշխատանքի արդիականությունը, նպատակը, թեմայի մշակվածության աստիճանը, մեթոդաբանությունը, մասնավորեցրել է խնդիրները, գիտական նորույթը, աղբյուրները, երեք գլխից, որտեղ ամփոփված են ատենախոսության բուն ուսումնասիրությունները.

եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, ինչպես նաև հարուստ է գրաֆիկներով, աղյուսակներով, հուշարձանների լուսանկարներով:

Առաջին՝ «Վանի թագավորության որմնանկարչությունը» գլխում, հեղինակը փորձել է ուսումնասիրել Թեյշեբահնի քաղաքի պեղումներով հայտնաբերված ճշգրիտ գծագրված սկավառակապատկերը և որպես պատկերագրական ապացույց ատենախոսը ներկայացրել է ուրարտական և հարևան մշակույթներում առկա նմանօրինակ տարբեր սկավառակապատկերներն ու դրանց վերաբերյալ պատկերացումները: Ատենախոսը անդրադարձել է նաև էրեբունի հնավայրում որմնանկարչական ընդհանուր գեղարվեստական նկարագրին, մասնավորապես միջնաբերդի հարավային մասում տեղակայված բաց արտաքին սյունասրահին և ուսումնասիրության արդյունքում հանգել այն եզրակացության, որ այդ հիմնապաստառը իրենից ներկայացնում է երկնային սրբազան աշխարհի երկչափ պատկերում:

Երկրորդ գլուխը՝ «Քանդակագործության գեղարվեստական առանձնահատկությունները» նվիրված է քանդակային հուշարձաններում Վանի թագավորության սրբությունների պատկերագրական դրսևորումներին և ուրարտական կնիքներում պաշտամունքային սյուժեների խորհրդաբանական վերլուծությանը: Հեղինակի կողմից առանձնակի ուշադրության է արժանացվում դիցարանի գլխավոր աստվածությունների կերպարային լուծումների պարզաբանումը, գեղարվեստական տարբեր հորինվածքներում կանոնիկ պատկերամոտիվների ոճական ընդհանրությունների ստուգաբանությունն ու յուրաքանչյուր պատկերի խորհրդաբանական իմաստաբանությունը: Ատենախոսության հեղինակը այս գլխում ավելի ակնառու է ներկայացնում Խալդի և Թեյշեբա աստվածությունների զինավառ կերպարները, որոնց պատկերագրական խորհրդաբանությունը վերծանելի է սեպագիր տեղեկությունների շնորհիվ:

Երրորդ գլուխը՝ «Վանի թագավորության գեղարվեստական մետաղագործությունը»: Այս գլխում քննվում են ուրարտական կերպարվեստում դիմահայաց պատկերագրության սկզբունքները: Հեղինակի կողմից համեմատական ուսումնասիրության է արժանացել բրոնզյա թիթեղների, գոտիների, զենքերի և

ծիսանոթների գեղարվեստական հարդարումը, որտեղ ատենախոսի կողմից ներկայացված են դրանց տիպաբանական առանձնահատկություններն ու զուգահեռները արվեստի այլ տեսակներում: Բացի վերը բերվածը, նշենք նաև, որ ատենախոսության հեղինակի դիտարկմամբ բազմաթիվ թիթեղներում ներկայացված է Խալդի աստվածությանը ընծայաբերության թեման՝ որպես փաստարկ ընդունելով Միերի դռան արձանագրությունում առկա հիշատակությունները:

Կատարված է ծավալուն աշխատանք, կատարված են արժեքավոր ուսումնասիրություններ, հետաքրքիր առաջարկներ, որոնք կարող են օգնել հետագայում նոր սերունդներին որպես հետազոտության նյութեր:

Բարձր գնահատելով հանդերձ ներկայացվածն, ունենք հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսությունում պետք էր ավելի հանգամանորեն ներկայացնել ուրարտական պատկերագրությունը, թերևս ավելի մեծ տեղ հատկացնելով արվեստաբանական սկզբունքներին:
2. Ատենախոսությունում կարելի էր ավելի մանրամասն անդրադարձ կատարել Վանի թագավորության կերպարվեստում ներկայացված ծիսակարգերի խորհրդաբանական նկարագրի վերլուծությանը:
3. Աշխատանքում շահեկան կլիներ, եթե առավել խորությամբ ներկայացվեր Հայկական լեռնաշխարհում կրոնական և մշակութային առանձնահատկությունները:

Վերոնշյալ դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Գայանե Պողոսյանի ատենախոսությունը կարելի է համարել կայացած գիտական աշխատություն: Այն գրված է նյութի խորը իմացությամբ, գիտական աշխատանքի անհրաժեշտ չափանիշներով, իսկ հեղինակն աչքի է ընկնում քննական, վերլուծական մտածողությամբ և հիմնավորված եզրահանգումներ կատարելու կարողությամբ:

Գայանե Ռոբերտի Պողոսյանի ««Ուրարտուի (Վանի թագավորություն) կերպարվեստի պատկերագրական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին

համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Վիգեն Ղազարյան

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

11.11.2021թ.

